

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 14.12.2012թ-ի նիստում քննության է առնվել <ՎԿՍ Արմենիա> ՍՊԸ 27.11.2012թ. առարկությունները ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ 27.11.2012թ-ի ուսումնասիրության արձանագրության դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ արձանագրությունը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես.

համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ 20.11.2012թ-ի թիվ 2209520 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <ՎԿՍ Արմենիա> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների վերադարձի հիմնավորվածության օրենքով սահմանված կարգով ներկայացվող տեղեկությունների ճշտության արձանագրման ուսումնասիրություն: Արդյունքում 27.11.2012թ-ին կազմվել է ուսումնասիրության արձանագրություն, որում մասնավորապես նշվել է.

ընկերության ԱԱՀ-ի Օ-ական դրույքաչափով հարկվող գործարքներին վերաբերվող ձեռքբերումների գծով ընկերության կողմից 2012թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում իրակացված գործարքների մասով դիմումով հաշվանցման (վերադարձման) ներկայացված ԱԱՀ-ի դեբետային մնացորդի գումարը կազմում է 1740471 դրամ, իսկ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների իրացման շրջանառությունը ուսումնասիրվող ժամանակաշրջանում կազմում է 71655101 դրամ, որին հասանելի (20% հաշվարկային) ԱԱՀ-ի գումարը համաձայն <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի կազմում է 14331020 դրամ: Ուսումնասիրությունից պարզվեց, որ ընկերությունը խախտելով <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներն առանց բանկի կամ փոստի միջոցով մատակարարի՝ <Բազում կարի ֆաբրիկա> ԱԿ բանկային հաշվին վճարում կատարելու 2012թ. ԱԱՀ-ի հաշվարկով հաշվանցել է 333.333 դրամ ԱԱՀ-ի գումարը, որը վերը նշված հաշվանցման ներկայացված 1740471 դրամից ենթակա է նվազեցման:

Համաձայն <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված ԱԱՀ-ի գումարը 333.333 դրամ, ինչպես նաև տուգանք այդ գումարի 50%-ի չափով՝ 166.667 դրամ:

Այսպիսով ուսումնասիրվող ժամանակաշրջանում դիմումով պահանջված 1740471 դրամ ԱԱՀ-ի դեբետային մնացորդի գումարից ենթակա է հաշվանցման սոցիալական ապահովության վճարների հաշվին և կամ վերադարձման 1240471 դրամ կամ ուսումնասիրությամբ չի հաստատվել 500.000 դրամ ԱԱՀ-ի գումարը:

<ՎԿՍ Արմենիա> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

Ընկերությունը և մատակարարը (միասին կանվանվեն կողմեր) ունեն կնքված և ստորագրված պայմանագիր, համաձայն որի մատակարարն ընկերությանը մատուցում է կարի ծառայություն, իսկ ընկերությունը վճարում է դրա դիմաց: Մատակարարը 12.10.2012թ. գրությամբ դիմել է ընկերությանը խնդրանքով, որ կապված դատական կարգով իր հաշիվների կալանքի տակ գտնվելու հետ, կնքել համաձայնագիր և փոփոխել այն բանկային հաշվի համարը, որին պետք է փոխանցվեր ծառայության դիմաց վճարումը: Այնուհետև, նույն ամսաթվին, կողմերը կնքել են համաձայնագիր, որով փոփոխություն է կատարվել պայմանագրի՝ մատակարարի բանկային ռեկվիզիտներում նշվելով այլ բանկային հաշիվ ֆիզիկական անձի անվամբ:

Ընկերությունը, <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքին համապատասխան հարկային հաշիվներով մատակարարից ստացված ծառայությունների դիմաց կատարել է բանկային

փոխանցում համաձայնագրում նշված բանկային հաշվին և առաջնորդվելով <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 23 հոդվածով, ինչպես նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ 05.08.2008թ <ԱԱՀ մասին> ՀՀ օրենքի կիրառման որոշ հարցերի վերաբերյալ> պաշտոնական պարզաբանման 3-րդ կետով, հաշվանցել է հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները: Ընկերությունը վճարումը կատարել է նաև ելնելով իր տնտեսական գործունեությունը չվնասելու և իր պատվիրատուների հանդեպ պարտավորությունները պատշաճ կատարելու անհրաժեշտությունից:

ՀՀ ԿԱ ՊԵԿ 05.08.2008թ. <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի կիրառման որոշ հարցերի վերաբերյալ> պաշտոնական պարզաբանման 3-րդ կետը նպատակ ունի հստակեցնելու, թե ինչ է նշանակում <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի <...մատակարարի բանկային հաշվին վճարում...> և հստակեցրել է, որ նաև <...մատակարարի հանձնարարությամբ գնորդի կողմից այլ (երրորդ) անձանց բանկային փոխանցում կատարելու դեպքում... ԱԱՀ-ի գումարները ենթակա են հաշվանցման>:

<Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 87 հոդվածի 6-րդ սահմանվում է, որ <... պաշտոնական պարզաբանումները պարտադիր բնույթ չունեն, սակայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերություններում անձինք իրավունք ունեն առաջնորդվել պաշտոնական պարզաբանումներով>: Հարկ է նշել, որ <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքով կամ այլ իրավական ակտով պաշտոնական պարզաբանման ժամկետայնության վերաբերյալ որևէ սահմանափակում գոյություն չունի և այն (պաշտոնական պարզաբանումը) ուժը կորցրած չի համարվել, գործում է առ այսօր իր ամբողջ բովանդակությամբ:

Ելնելով վերոնշյալից, ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ուսումնասիրության արձանագրությունը և ընկերության կողմից հաշվանցված (հետ վերադարձվող) 333.333 դրամ գումարը համարել <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգով հաշվանցված ԱԱՀ-ի գումար:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի և ուսումնասիրության արձանագրությունը կազմած անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ առարկությունները հիմնավոր չեն:

Քննարկվող դեպքում <ՎԿՍ Արմենիա> ՍՊԸ և <Բազում կարի ֆաբրիկա> կազմակերպության միջև կնքված պայմանագրի համաձայն, վերջինիս կողմից կատարվել են պայմանագրով նախատեսված աշխատանքները: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ <Բազում կարի ֆաբրիկա> կազմակերպության բանկային հաշիվները գտնվել են կալանքի տակ, կողմերի միջև կազմվել է համաձայնագիր՝ պայմանագրով նախատեսված գումարները <Բազում կարի ֆաբրիկա> կազմակերպության բանկային հաշիվի փոխարեն ֆիզիկական անձ՝ Էդուարդ Գյունաշյանի հաշվեհամարին փոխանցելու վերաբերյալ, ինչը և կատարվել է:

Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության կողմից հիշատակված ՀՀ ԿԱ ՊԵԿ 05.08.2008թ. <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի կիրառման որոշ հարցերի վերաբերյալ> պաշտոնական պարզաբանման 3-րդ կետը, ըստ էության, կիրառելի չէ, քանի որ այն վերաբերվում է <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի մինչև 2009թ. գործող խմբագրությանը:

Տվյալ դեպքում հարկ է նշել, որ <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով (գործող խմբագրությամբ) հստակ սահմանված է. <Սույն օրենքի համաձայն ԱԱՀ վճարող անձինք հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը, որից հաշվանցվում (պակասեցվում) են՝

1) արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված այն ապրանքների և ստացված այն ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում

ատանձնացված ԱԱՀ-ի գումարների չափով (բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի), որոնց դիմաց բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին կատարվել է վճարում, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի>:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ 27.11.2012թ-ի ուսումնասիրության արձանագրությունը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ